



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 135Ը68 23 04 201 ՁԲ

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ «ՖԻԶՂԱՍՏԻԿԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՂԱՍԸՆԹԱՑԻ ՂԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի պետական համալսարանում «Ֆիզղաստիարակություն» դասընթացի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Սահմանել, որ.

ա) Երևանի պետական համալսարանի առաջին կուրսի ուսանողներին թույլատրվում է մասնակցել ֆիզղաստիարակության դասընթացներին պոլիկլինիկայում բուժզննում անցնելուց և առողջության վերաբերյալ տեղեկանքը ԵՊՀ ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն (այսուհետ՝ ամբիոն) ներկայացնելուց հետո: Ընդ որում, տեղեկանքների ներկայացման վերջնաժամկետը ընթացիկ ուսումնական տարվա սեպտեմբերի 14-ն է:

բ) Սույն հրամանի 1-ին կետում սահմանված տեղեկանքը չներկայացնող ուսանողներին արգելվում է մասնակցել ֆիզղաստիարակության դասերին և նրանց բացակայությունը համարվում է անհարգելի:

գ) Առողջական խնդիրներ ունեցող ուսանողները ԵՊՀ բուժկետի մասնագետների եզրակացության հիման վրա ընդգրկվում են բուժական ֆիզղաստիարակության խմբերում, իսկ այդպիսի ուսանողներին ֆիզղաստիարակության դասերից ազատումը կատարվում է միայն բժշկական եզրակացության հիման վրա:

դ) ԵՊՀ ուսանողները և ասպիրանտները կարող են ընդգրկվել մարզական սեկցիաներում՝ դիմում ներկայացնելով ամբիոնի վարիչին: Սեկցիաներում ընդգրկումը ձևակերպվում է ամբիոնի վարիչի հրամանով:

ե) Ֆիզղաստիարակության դասերին և մարզական սեկցիաների պարապմունքներին մասնակցությունը պարտադիր գրանցվում է մատյաններում, իսկ բացակայությունները յուրաքանչյուր օր ամրագրվում են SV ծրագրով:

գ) Ֆիզդաստիարակության դասերից կարող են ազատվել տարբեր մարզածների հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված ուսանողները:

է) Ֆիզդաստիարակություն դասընթացից «Ստուգված» ստանում են այն ուսանողները, ովքեր հաճախել են դասերի (մարզական սեկցիաների)՝ ուստարվա համար նախատեսված ժամաքանակի առնվազն կեսին:

«Ստուգված» նիշն ամրագրում է ամփոփագրերում համապատասխան ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկանատը՝ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունից ստացած ցուցակների հիման վրա:


Նշված ժամաքանակը չապահոված ուսանողները ստանում են «Չստուգված», իսկ բաց թողնված ժամերը նրանք կարող են լրացնել հաջորդող ուսումնական տարում:

Բաց թողնված դասերի լրացման համար ուսանողը դիմում է ներկայացնում ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին: Թույլտվությունը ձևակերպվում է ԵՊՀ հրամանով, որի հիման վրա տվյալ ուսանողն ամբիոնի վարիչի կողմից կցվում է որևէ խմբի: 20 և ավելի ուսանողների դեպքում ձևավորվում է առանձին խումբ:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ֆակուլտետներին/ինստիտուտներին/կենտրոններին, ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի աշխատողներին և ուսանողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՈՇԿՏՈՐ



Ա. Ա. ՆԻՍՈՆՅԱՆ